

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017թ. դեկտեմբերի 29-ի նիստի**

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 37-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում (զեկ.՝ դոց. Գ.Կոստանյան):
2. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյան):
3. Հաղորդում ընթացիկ քննությունների արդյունքների և 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ ի.գ.թ., դոցենտ Գ.Կոստանյան):

Ի.գ.թ., դոցենտ Գ.Կոստանյանը հանդես եկավ «Պետության հայեցողության հիմնախնդիրները սահմանադրաիրավական եվ կոնվենցիոն կարգավորումների համատեքստում (անձի ազատության, անձեռնմխելիության և արդար դատաքննության իրավունքներ)» վերտառությամբ գիտական հաղորդմամբ: Ձեկուցողը նշեց, որ իր կողմից վերլուծության է ենթարկվել անձի անձեռնմխելիության իրավունքի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, որը համադրվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռների հետ՝ բացահայտելով և վերհանելով դրանց օրինաչափություններն ու կիրառման առանձնահատկությունները, գիտական և գործնական մակարդակով իր կողմից քննարկման առարկա է դարձվել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքների իրացմանը միջամտելու պետության թույլատրելիության հնարավորությունը:

Ձեկուցողն անդրադառնալով իր կողմից հետազոտված՝ պետության հայեցողության և դրա սահմանների կիրառական ու հիմնարար սկզբունքներին, հանդես եկավ այն եզրահանգմամբ, որ «օրենքի գերակայություն» և «իրավունքի գերակայություն» սկզբունքների՝ բովանդակային նշանակության և համակարգային առումներով, զուգակցումը՝ կոչված է ապահովելու պետության հայեցողության սահմանների կիրառման հնարավորությունը: Այս եզրահանգմամբ հիմնավորվեց այն դիրքորոշումը, ըստ որի՝ եթե պետության հայեցողությունը տրված և երաշխավորված է օրենքի գերակայության սկզբունքին համապատասխան, ապա դրա սահմանները որոշվում և հստակեցվում են իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա:

Ձեկուցողը նշեց, որ իր կարծիքով պետության հայեցողության սահմանները չեն կարող ապահովել ինքնուրույն կիրառություն, եթե դրան չնախորդեն կամ առնվազն չզուգակցեն կոնվենցիոն համակարգի բաղկացուցիչ մաս կազմող այն սկզբունքների համալիրը, որոնց հիման վրա և շրջանակներում իրականացվում ու նախանշվում են այդ հայեցողության սահմանները:

Ձեկուցողն անդրադարձավ հայեցողության սահմանների կիրառման բացասական և դրական կողմերին՝ սահմանելով դրանց ազդեցությունը պետության հայեցողության

դրսևորման հետևանքների և ժամանակակից սահմանադրաիրավական համակարգի արդիականացման ու զարգացումների համատեքստում: Ձեկուցողի կողմից հիմնավորվեց այն թեզը, ըստ որի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրավաչափ համարվող պետության հայեցողության սահմանների կիրառման հիմնական թերությունն ու միաժամանակ, առավելությունը՝ այդ հայեցողության կանխատեսելիության բացակայությունն է, ինչը հնարավորություն չի ընձեռնում նախատեսել հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց իրավական կարգավորումների հստակ կառուցակարգեր (մեխանիզմներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ձեկուցումից հետո ծավալվեց ակտիվ քննարկում, որին մասնակցեցին պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

Հաշվի առնելով թեմայի ընդգրկուն բնույթը, սակայն զեկուցման համար նախատեսված սեղմ ժամկետը՝ խորհրդի նախագահ պրոֆ. Գ.Ղազինյանն առաջարկեց ապագայում առանձին քննարկում կազմակերպել այդ թեմայով:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյան):

Ամբիոնների վարիչ պրոֆ. Վ.Ստեփանյանը ներկայացրեց հաշվետվություն հաշվետու ժամանակահատվածում Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյան):

Ձեկուցողը հատուկ անդրադարձավ նաև ամբիոնի գործունեության մեջ առկա թերացումներին, կադրային խնդիրներին՝ հասվաստիացնելով, որ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվում դրանք լուծելու ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ընթացիկ քննությունների արդյունքների և 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:

Դեկանի տեղակալ պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ընթացիկ քննությունների արդյունքների և 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատաստության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Հայ-ռուսական /Սլավոնական/ համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Սասուն Բադդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Հայ-ռուսական /Սլավոնական/ համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Սասուն Բաղդասարյանի՝ «Պաշտպանության ոլորտում հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Վաղարշյանին:

4.2 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և Միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ասպիրանտ Գրիգոր Չոբանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Եվրոպական և Միջազգային իրավունքի ամբիոնի առկա ասպիրանտ Գրիգոր Չոբանյանի՝ «Միջազգային տնտեսական ինտեգրացման իրավական հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., ասիստենտ Վ.Վարդանյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.3 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արփինե Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արփինե Սարգսյանի՝ «Դատական ակտերի պրեյուդիցիալ կապը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

Բ.Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Ս.Մեղրյանին:

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Դ.Մեղրյանի

«Քաղաքացիական իրավունք. սեփականության իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը որպես էլեկտրոնային գիրք հրապարակել երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Դ.Սերոբյանի «Քաղաքացիական իրավունք. սեփականության իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել որպես էլեկտրոնային գիրք հրապարակել:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

2016-2017 թթ. հաշվետու ժամանակաշրջանում գիտատեսական գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Գիտական գործունեություն

1. Հրատարակված գիտական աշխատանքները.

- գիտական հոդվածներ՝ 9,

2. Մասնակցություն գիտական կոնֆերանսներին, կոոր-սեղաններին և այլն՝ 15.

1. Բ. Վարդանյան - «Առողջապահական իրավունք» թեմայով դասընթաց՝ կազմակերպված «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի և ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կողմից, փետրվար 28-մարտի 1, 2017, Երևան, Հայաստան:

2. Բ. Վարդանյան - «Հորիզոն 2020 - Մարի-Սկլադովսկա Կյուրի գործողությունների մասնակցության հնարավորություններ» խորագրով՝ կազմակերպված ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից, մարտի 3, 2017, Երևան, Հայաստան:

3. Բ. Վարդանյան - «Փախստականների իրավական պաշտպանությունը» թեմայով վերապատրաստման դասընթաց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցների համար՝ կազմակերպված ՄԱԿ ՓԳՀ-ի և ՀՀ ՄԻՊ գրասենյակի կողմից, մայիսի 22, 2017, Երևան, Հայաստան:

4. Ա. Սիմոնյան - International law and conflict resolution. February 8-14, 2017 London, UK

5. Ա. Սիմոնյան - Workshop on Migration Law, ELSA Yerevan Armenia 2017

6. Ա. Սիմոնյան - Վարչական իրավահարաբերությունների արդի հիմնախնդիրները, Երևան մարտ- ապրիլ 2017

7. Վ. Վարդանյան - Պատասխանատուներին պատասխանատվության կանչելը՝ միջազգային գիտաժողով, Քլարքի համալսարան, Վուսթեր, Մասաչուսեթս, ԱՄՆ, 2017թ. ապրիլ

8. Վ. Վարդանյան - ԿԽՄԿ «Մարտենայան ընթերցումներ», Միջազգային մարդասիրական իրավունքի միջազգային գիտաժողով, Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն, 2017թ. մայիս

9. Տ.Գրիգորյան - Ոչարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն՝ ծրագրի շրջանակներում

կազմակերպվող դասընթաց Հերթի կառավարման դպրոցում, 2017 թ. փետրվարի 20-ից մարտի 10-ը, Բեռլին, Գերմանիա

10.Տ.Գրիգորյան - Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված՝ կիրքերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի քննարկմանը նվիրված աշխատաժողով, 2017 թ. մայիսի 5-ից 6-ը, Երևան

11.Տ. Գրիգորյան - Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիկսի ղեկավարությամբ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային գործողությունների ծրագրերին նվիրված քննարկում, 2017 թ. հունիսի 2, Ստրասբուրգ, Ֆրանսիայի Հանրապետություն

12.Տ.Գրիգորյան-Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության Առաջին պլատֆորմի (Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում, կայունություն) ներքո գործող Օրենքի գերակայության հարցերով աշխատանքային խմբի կիրքերհանցագործությունների դեմ պայքարին նվիրված աշխատաժողովին մասնակցություն, 2017 թ. հունիսի 15ից 16-ը, Բրյուսել, Բելգիայի Թագավորություն

3. Պրոֆեսորադասախոսական կազմի հրատարակություններ և զեկույցներ՝ 4

1. Վահե Ստեփանյան “НАЦИОНАЛЬНОЕ СОБРАНИЕ В МОДЕЛИ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ”, Северо-Кавказский юридический вестник, 2017

2. Վահե Ստեփանյան “РАЗДЕЛЕНИЕ ВЛАСТЕЙ В МОДЕЛИ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ”, Вектор науки ТГУ. Серия: Юридические науки, 2017

3. Վ. Ստեփանյան, Ն. Ալավերդյան «Պաշտոնատար անձ» հասկացությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, Պետություն և իրավունք, 2017

4. Վ. Ստեփանյան «Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում», Բանբեր Երևանի համալսարանի, 2017

5. Քնարիկ Վարդանյան «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում դասավանդվող «Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը» դասընթացի համառոտ բնութագիրը», Դատական իշխանություն, Թիվ 1-2 (211-212), Երևան, 2017

6. Ընտանիքի միասնության և վերամիավորման իրավունքը փախստականների իրավունքների պաշտպանության համատեքստում (համահեղինակությամբ), Դատական իշխանություն, Թիվ 5-6 (215-216), Երևան, 2017

7. Վլադիմիր Վարդանյան «Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման հիմնախնդիրները», Եր.: ԵՊՀ հրատ., 2017թ. -174 էջ:

8. Վլադիմիր Հովհաննիսյան “Имплементация международно-правовых норм и принципов по правам человека конституционными судами как важный фактор укрепления национальной безопасности”, Изд. на БАН, “Проф. Марин Дринов”, София 2017

9. Վլադիմիր Հովհաննիսյան “Международные стандарты прав человека в правоприменительной практике конституционных судов”, Российский юридический журнал, 2/2017

5. Ուսումնական գործունեություն

1. *Գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վերապատրաստում.*

- ամբիոնն ունի 1 առկա ուսուցմամբ ասպիրանտ, 4 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ, 1 հայցորդ,

2. *Մագիստրոսական ծրագրերի վերանայում.*

- ներկայացվել են «Եվրոպական և միջազգային իրավունք» մագիստրոսական ծրագրերի պահպանման հիմնավորումները: Վերանայվել և կրճատվել է մագիստրոսական ծրագրերի դասընթացների ցանկը:

3. *Պետական քննությունների անցկացման ձևի վերանայում.*

- Ամբիոնում քննարկվել է ընթացիկ քննությունները խնդիրների լուծման տարբերակով անցկացնելու ընթացակարգը, սակայն ամբիոնի անդամները նպատակահարմար են գտել միջազգային իրավունք առարկայի քննությունը շարունակել անցկացնել թեստային տարբերակով:

- 2017-2018 ուս. տարում բակալավրիատի պետական քննությունը «Եվրոպական իրավունք» և «Միջազգային իրավունք» առարկաներից նախատեսվում է անցկացնել գրավոր ձևով,

- կատարվում են նախնական աշխատանքներ պետական քննության ընթացքում առաջադրվելիք խնդիրների տարբերակների, ինչպես նաև գնահատման չափանիշների մշակման ուղղությամբ:

4. *Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում.*

- դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու նպատակով թարմացվել և կայքում զետեղվել են առարկայական ծրագրերը, որոշ ուսումնական և ուսումնաօժանդակ նյութեր:

5. Արտահամալսարանական գործունեություն.

- ամբիոնի անդամ Վ. Ստեփանյանը հանդիսանում է Քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի անդամ, Արդարադատության խորհրդի անդամ
- ամբիոնի անդամ Վ. Քոչարյանը հանդիսանում է Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի անդամ, ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի աշխատանքային խմբի ղեկավար
- ամբիոնի անդամ Կ. Գևորգյանը հանդիսանում է GRECO պատվիրակության անդամ
- ամբիոնի անդամ Վ. Վարդանյանը հանդիսանում է Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն, Ցեղասպանության հետազոտությունների միջազգային ասոցացիայի անդամ:

Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում տեղի ունեցած «Նյուրնբերգյան դատախաղ-2017» միջազգային մրցույթում Երևանի պետական համալսարանի թիմը հաղթանակ է տարել եւ անցել կիսաեզրափակիչ փուլ:

Դեկտեմբերի 8-10-ը Ծաղկաձորում տեղի ունեցած Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից կազմակերպված միջազգային մարդասիրական իրավունքին նվիրված դատախաղին Երևանի պետական համալսարանը ներկայացնող՝ Իրավագիտության ֆակուլտետի ուսանողներից կազմված «Մարտենս» թիմը (անդամներ՝ Լուսինե Հովհաննիսյան (2-րդ կուրս), Էրիկ Ծերունյան (3-րդ կուրս) և Արամ Թումանյան (3-րդ կուրս)) եզրափակիչ փուլում զբաղեցրել է առաջին հորիզոնականը:

Ամբիոնի վարիչ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
29.12.2017 թ.